

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

**5.3. 2004թ. հոկտեմբեր ամսվա հիդրոտեղուքաբանական պայմանները Հայաստանում**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հոկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-2աստիճանով, Աշոցքում՝ (Շիրակի մարզ) 1 աստիճանով ցածր:

Հոկտեմբերի 1-3-ին, 8-13-ին, 17-21-ին և 28-31-ին օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-4, առանձին օրեր՝ 5-6 աստիճանով:

Հյուսիս արևմուտքից ցուրտ օդային հոսանքների ներխուժմամբ պայմանավորված՝ հոկտեմբերի 4-6-ին, 14-16-ին և 22-27-ին օդի ջերմաստիճանը կտրուկ նվազել է (10-12 աստիճանով): Այդ օրերին օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 5-8 աստիճանով:

Նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում, Լոռիում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է  $-2^{\circ}\text{C}$   $-7^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում և Տավուշում՝  $0$   $-2^{\circ}\text{C}$ , Սյունիքի հովիտներում՝  $+1$   $+5^{\circ}\text{C}$ :

Ամսվա առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է հոկտեմբերի 1-ին Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում և Տավուշում՝  $+30^{\circ}\text{C}$   $+33^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+27^{\circ}\text{C}$   $+30^{\circ}\text{C}$ , լեռնային շրջաններում՝  $+22^{\circ}\text{C}$   $+25^{\circ}\text{C}$ :

Ամսվա ընթացքում գրանցված նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները որոշ շրջաններում մոտ են եղել և գերազանցել են հանրապետության տարածքում երբևէ գրանցված բացարձակ ջերմաստիճաններին:

Ամսվա առաջին կեսին հանրապետությունում գրեթե ամենուրեք դիտվել են անձրև և ամպրոպ:

Արարատյան դաշտում, Տավուշում, Սյունիքում և Ջերմուկում (Վայոց ձորի մարզ) ամսական տեղումների քանակը եղել է նորմայի սահմաններում և կազմել դրա 85-115%-ը: Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնի լեռնային շրջաններում այն ցածր է եղել նորմայից և կազմել է դրա 28-67%-ը:

Հոկտեմբերին առանց տեղումների եղանակ դիտվել է ամսի 1-2-ին, 11-13-ին, 18-20-ին և 23-31-ին:

Հոկտեմբերի 9-ին Գավառում և Սևանում (Գեղարքունիքի մարզ) դիտվել է քանու ուժգնացում: Քանու արագությունը հասել է 15-18 մ/վրկ, պոռթկումները՝ 20 մ/վրկ:

Հանրապետության հյուսիսային շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտավորապես 100-120%-ը, կենտրոնական և հարավային շրջանների գետերում՝ 70-80%-ը:

Սևանա լճի մակարդակն իջել է 6 սմ-ով և կազմել 1897.71 մ, որը 2003թ. հոկտեմբերի 31-ի համեմատ բարձր է 41 սմ-ով: